

**ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07**  
**Վիճակագրության պետական խորհրդի նիստի**

05.05.2006թ.

ժ. 11.00

**Մասնակցում էին՝**

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Վ. Դանիելյան, Հ. Պետրոսյան, Գ. Գևորգյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

**Հրավիրված էին՝**

Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Ա. Հարությունյան (*Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ*), Հ. Տիտիզյան (*Ֆինանսների վիճակագրության բաժնի պետ*), Ա. Պետրոսյան (*Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ*)

**Օրակարգի նախագծում՝** հինգ հարց.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»

*/Զեկուցող՝ Գ. Գյուրջյան/*

2. «Հայաստանի Հանրապետության 2007-2009 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի նախագծին» հավանություն տալու մասին.

*/Զեկուցող՝ Գ. Գյուրջյան/*

3. Այլ հարցեր

3.1 Եվրոպական հանձնաժողովի Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Միջին Ասիայի /ԱԵԿՄ/ երկրների Ջրային նախաձեռնությունների Աշխատանքային խմբի, Ջրամատակարարման ոլորտում բարեփոխումների պատասխանատու բարձրաստիճան պաշտոնյաների և այդ երկրներում Շրջակա միջավայրի պահպանության Ծրագրի ֆինանսավորման համակարգի 2006թ. ապրիլի 26-28-ին ք. Ալմաթիում կայացած երկրորդ համատեղ հանդիպմանը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մասնակցության վերաբերյալ.

*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/*

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»

*/Զեկուցող՝ Գ. Գյուրջյան/*

**Որոշեցին՝**

Ուժը կորցրած ճանաչել.

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2000 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի կազմակերպչական և մեթոդաբանական հիմնական դրույթները հաստատելու մասին» թիվ 04 որոշումը:

2. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2000 թվականի հուլիսի 25-ի «ՀՀ վիճակագրության մարզային վարչություններին և դրանց տարածքային ստորաբաժանումներին՝ տների (շինությունների) ցուցակները և գյուղական բնակավայրերի ցուցակները կազմելու կարգի մասին ցուցումները հաստատելու մասին» թիվ 05 որոշումը:

3. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2000 թվականի հուլիսի 25-ի «Քաղաքներում և խոշոր գյուղերում տների (շինությունների) ցուցակները կազմելու կարգի հրահանգը հաստատելու մասին» թիվ 06 որոշումը:
4. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2000 թվականի հուլիսի 25-ի «Գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակները կազմելու հրահանգը հաստատելու մասին» թիվ 07 որոշումը:
5. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2000 թվականի օգոստոսի 15-ի «Ցուցումներ ՀՀ վիճակագրության մարզային վարչություններին և դրանց տարածքային ստորաբաժանումներին ՀՀ 2000 թվականի փորձնական մարդահամարն անցկացնելու կազմակերպական պլանները կազմելու կարգ»-ը և այդ կարգը բնութագրող հաշվետվական ձևերը հաստատելու մասին» թիվ 11 որոշումը:
6. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2000 թվականի օգոստոսի 15-ի «ՀՀ 2000թ. փորձնական մարդահամարի «Ձև Ա», «Ձև Ժ», «Ձև Խ» հարցաթերթերը հաստատելու մասին» թիվ 12 որոշումը:
7. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2000 թվականի օգոստոսի 15-ի «ՀՀ 2000թ. փորձնական մարդահամարի «Քաղաքներում հաշվարարի՝ Ձև 11-քաղաքային», «Գյուղական վայրերում հաշվարարի՝ Ձև 11-գյուղական», «Քաղաքներում հրահանգիչ-հսկիչի՝ Ձև 12-քաղաքային», «Գյուղական վայրերում հրահանգիչ-հսկիչի՝ Ձև 12-գյուղական», «Մարդահամարային տեղամասի վարիչի և նրա օգնականի՝ Ձև 13» հուշատետրերը հաստատելու մասին» թիվ 13 որոշումը:
8. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2000 թվականի օգոստոսի 15-ի «ՀՀ 2000թ. փորձնական մարդահամարի «Հսկիչ թերթ», «Տեղեկանք ՀՀ 2000թ, փորձնական մարդահամարն անցնելու մասին», «Վերահսկիչ փաստաթուղթ» ձևերը հաստատելու մասին» թիվ 14 որոշումը:
9. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2000 թվականի սեպտեմբերի 13-ի «Հայաստանի Ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտության «Տնային տնտեսությունների հարցաթերթիկը», «Կանանց անհատական հարցաթերթը» և «Տղամարդկանց հարցաթերթը» հաստատելու մասին» թիվ 17 որոշումը:
10. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 29-ի «Սննդամթերք և ըմպելիք արտադրող կազմակերպությունների ընտրանքային հետազոտություն Ձև ՄԸ-արտ» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթը և դրա լրացնելու կարգի մասին Հրահանգը հաստատելու մասին» թիվ 27 որոշումը:
11. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի հունվարի 30-ի «2001 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 28 որոշումը:
12. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի փետրվարի 28-ի «Քաղաքներում և խոշոր գյուղերում տների (շինությունների) ցուցակները կազմելու կարգի մասին Հրահանգը հաստատելու մասին» թիվ 30 որոշումը:
13. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի փետրվարի 28-ի «Գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակները կազմելու կարգի մասին Հրահանգը հաստատելու մասին » թիվ 31 որոշումը:
14. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի փետրվարի 28-ի «ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչություններին և դրանց տարածքային բաժիններին՝ տների (շինությունների), ցուցակները և գյուղական բնակավայրերի ցուցակները կազմելու կարգի մասին Ցուցումները հաստատելու մասին» թիվ 32 որոշումը:
15. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի մարտի 20-ի «ՀՀ 2001 թվականի մարդահամարի «Ցուցումներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչություններին և դրանց տարածքային բաժիններին՝ քաղաքների համար կազմված տների (շինությունների) ցուցակների, գյուղական վայրերում՝ գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների ընդունման կարգի մասին» փաստաթուղթը հաստատելու մասին» թիվ 33 որոշումը:

16. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի ապրիլի 4-ի «ՀՀ 2001 թվականի մարդահամարի կազմակերպչական և մեթոդաբանական հիմնական դրույթները հաստատելու մասին» թիվ 34 որոշումը:
17. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի ապրիլի 30-ի «ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչություններին և դրանց տարածքային ստորաբաժանումներին ՀՀ 2001 թվականի Մարդահամարն անցկացնելու կազմակերպման պլանները կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 37 որոշումը:
18. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի ապրիլի 30-ի «ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչության և դրանց տարածքային բաժինների պետերի մարդահամարի գծով տեղակալ-խորհրդականի պարտավորությունները հաստատելու մասին» թիվ 38 որոշումը:
19. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի ապրիլի 30-ի «Բազմաբնակարան շենքի բնակարանների բնութագիրը» Հ. 1 բնակբնութագիր պետական վիճակագրական հաշվետվային ձևը և դրա լրացման կարգի վերաբերյալ Հրահանգ հաստատելու մասին» թիվ 39 որոշումը:
20. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի հուլիսի 26-ի «ՀՀ 2001թ. մարդահամարի հարցաթերթը և ՀՀ 2001թ. մարդահամարի հարցաթերթը լրացնելու (մարդահամարն անցկացնելու) կարգի մասին Հրահանգը հաստատելու մասին» թիվ 59 որոշումը:
21. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հրահանգիչ-հսկիչի (ձև 14), Մարդահամարի տեղամասի վարիչի (ձև 15) հաշվետվությունները և Ուղեկցող թերթը (ձև 10) հաստատելու մասին» թիվ 61 որոշումը:
22. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի օգոստոսի 16-ի «Քաղաքային հաշվային տեղամասի (ձև 6-քաղաքային), Գյուղական վայրի հաշվային տեղամասի (ձև 6-գյուղական), Հրահանգչական տեղամասի (ձև 7), Մարդահամարի տեղամասի (ձև 8, ձև 8-ի հավելված), Մարզի (տարածքի) (ձև 9) ամփոփ տեղեկագրերը հաստատելու մասին» թիվ 62 որոշումը:
23. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի օգոստոսի 16-ի «Քաղաքներում հաշվարարի (ձև 11-քաղաքային), Գյուղական վայրում հաշվարարի (ձև 11-գյուղական), Գյուղական վայրում հրահանգիչ - հսկիչի (ձև 12 - գյուղական), Քաղաքներում հրահանգիչ - հսկիչի (ձև 12-քաղաքային), Մարդահամարի տեղամասի վարիչի և նրա օգնականի (ձև 13) Հուշատետրերը հաստատելու մասին» թիվ 63 որոշումը:
24. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի օգոստոսի 16-ի «Ծառայություններ մատուցող կազմակերպությունների ընտրանքային հետազոտության (ձև ԲԿԾ-1)» և Ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի ընտրանքային հետազոտության (ձև ԲԿԾ-2)» հարցաթերթերը և «Ծառայություններ մատուցող կազմակերպությունների ընտրանքային հետազոտության հարցաթերթի լրացման կարգի մասին Հրահանգը» հաստատելու մասին» թիվ 64 որոշումը:
25. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի օգոստոսի 24-ի «ՀՀ 2001թ. մարդահամարի հաշվառումն օդանավակայաններում և սահմանային անցման կետերում անցկացնելու մասին Ցուցումները» հաստատելու մասին» թիվ 65 որոշումը:
26. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի օգոստոսի 24-ի «ՀՀ 2001թ. մարդահամարի նյութերի (հաշվառման փաստաթղթերի) ընդունման-հանձման կարգը» հաստատելու մասին» թիվ 66 որոշումը:
27. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի սեպտեմբերի 10-ի «Էներգիա արտադրող և սպառող կազմակերպությունների /ձև-էներգետիկա/ ընտրանքային հետազոտության անցկացման հարցաթերթը» և դրա լրացման մասին Հրահանգը հաստատելու մասին» թիվ 71 որոշումը:
28. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի «Հանրապետությունում վնասվածության 3-րդ և 4-րդ աստիճանի (վթարային և խարխուլ) բազմաբնակարան շենքերի և բնակելի տների (առանձնատների) միանվագ հաշվառում» հետազոտության հարցաթերթը և լրացման Հրահանգը հաստատելու մասին» թիվ 80 որոշումը:

29. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հունվարի 29-ի «2002 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» հաստատելու մասին» թիվ 100 որոշումը:
30. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի փետրվարի 1-ի «2001 թվականին իրական ակտիվներում իրականացված ներդրումների մասին» ընտրանքային հետազոտության հարցաթերթը և լրացման Ցուցումները հաստատելու մասին» թիվ 101 որոշումը:
31. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի մարտի 7-ի «Ապրանքների արտահանմամբ և ներմուծմամբ զբաղվող կազմակերպությունների ընտրանքային հետազոտության հարցաթերթը (ձև N 1 - արտաքին առևտուր) և Մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 103 որոշումը:
32. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի ապրիլի 19-ի «Առողջապահական կազմակերպությունների և դեղատների ֆինանսական գործունեության վերաբերյալ հետազոտության հարցաթերթը և դրա լրացման Հրահանգը հաստատելու մասին» թիվ 107 որոշումը:
33. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 9-ի «Չտեղակայված սարքավորումների հաշվեգրման անցկացման վերաբերյալ» ձև թիվ ՉՍ-1 (փոստային-տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման Հրահանգը հաստատելու մասին» թիվ 142-Ն որոշումը:
34. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 9-ի «Նյութատեխնիկական ապահովման կազմակերպությունների հիմնական ցուցանիշների մասին» ձև թիվ 1-ՆՏՄ պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման Հրահանգը հաստատելու մասին թիվ 143-Ն որոշումը:
35. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հոկտեմբերի 18-ի «Ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական գործունեության վերաբերյալ հարցաթերթը և դրա լրացման Հրահանգը հաստատելու մասին» թիվ 243-Ն որոշումը:
36. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի հունվարի 24-ի «2003 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 01-Ն որոշումը:
37. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի հունվարի 27-ի «2004 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 01-Ն որոշումը:
38. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի սեպտեմբերի 28-ի «Հանքային ջրերի պաշարների, արդյունահանման և օգտագործման մասին» ձև թիվ 1-հանքջուր պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթը և լրացման Հրահանգը հաստատելու մասին» թիվ 18-Ն որոշումը:
39. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի հունվարի 14-ի «2005 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 01-Ն որոշումը:

*/Նորմատիվ/*

*/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2. «Հայաստանի Հանրապետության 2007-2009 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի նախագծին» հավանություն տալու մասին.

*/Զեկուցող՝ Գ. Գյուրջյան/*

*Նշվեց, որ սույն նախագիծը մշակվել է ի կատարումն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան և սահմանում է 2007-2009 թվականների պետական վիճակագրական գործունեության հիմնական ուղղություններն ըստ սոցիալական, տնտեսական, բնապահպանական և ժողովրդագրական բնագավառների: Միաժամանակ նշվեց նաև, որ Ծրագրի*

նախագիծը, որպես ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից կատարման ենթակա աշխատանք, «2006թ. նոյեմբերի առաջին տասնօրյակ» կատարման ժամկետով, ներառվել է նաև ՀՀ կառավարության 09.12.2002թ. «ՀՀ կառավարության 2006 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» թիվ 2200-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ցանկում (Կետ 176):

**Որոշեցին՝**

1. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության 2007-2009 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի» նախագծին:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնին՝ կազմակերպել Ծրագրի նախագիծը սպառողներին կարծիքի ներկայացնելու, արդյունքներն ամփոփելու և Խորհրդին տեղեկատվություն ներկայացնելու աշխատանքները:

*/Արձանագրային/*

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**3. Այլ հարցեր**

3.1 Եվրոպական հանձնաժողովի Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Միջին Ասիայի /ԱԵԿՄԱ/ երկրների Ջրային նախաձեռնությունների Աշխատանքային խմբի, Ջրամատակարարման ոլորտում բարեփոխումների պատասխանատու բարձրաստիճան պաշտոնյաների և այդ երկրներում Շրջակա միջավայրի պահպանության Ծրագրի ֆինանսավորման համակարգի 2006թ. ապրիլի 26-28-ին ք. Ալմաթիում կայացած երկրորդ համատեղ հանդիպմանը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մասնակցության վերաբերյալ.

*/Ձեկուցող՝ Յու. Պողոսյան/*

**Որոշեցին՝**

Ընդունել ի գիտություն Եվրոպական հանձնաժողովի Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Միջին Ասիայի /ԱԵԿՄԱ/ երկրների Ջրային նախաձեռնությունների Աշխատանքային խմբի, Ջրամատակարարման ոլորտում բարեփոխումների պատասխանատու բարձրաստիճան պաշտոնյաների և այդ երկրներում Շրջակա միջավայրի պահպանության Ծրագրի ֆինանսավորման համակարգի 2006թ. ապրիլի 26-28-ին ք. Ալմաթիում կայացած երկրորդ համատեղ հանդիպմանը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

*/Արձանագրային/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան